ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2018 թվականի նոյեմբերի 26-28-ը Ավստրիայի Հանրապետություն գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը.**

   Արման Պողոսյան

2. **Զբաղեցրած պաշտոնը.**

   ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**

   Վիեննա, Ավստրիայի Հանրապետություն, 2018 թվականի նոյեմբերի 26-28-ը

4. **Հրավիրող կողմը.**

   Համաշխարհային Բանկ

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**

   Գործուղման նպատակն է՝ մասնակցությունը Համաշխարհային բանկի խմբի Ֆինանսական հաշվետվությունների բարեփոխումների կենտրոնի կողմից կազմակերպված «Բարձրորակ ֆինանսական տեղեկատվություն և տնտեսական ինտեգրացիա» խորագրով 2018թ. նախարարական համաժողովին և այդ համաժողովի շրջանակներում նախատեսված բարձրաստիճան պաշտոնյաների աշխատաժողովին:

   Վերը նշված միջոցառումները նախատեսված են աջակցելու Ֆինանսական հաշվետվությունների բարեփոխումների կենտրոնի կողմից ֆինանսական

հաշվետվողականության ոլորտում իրականացվող ծրագրերի շահառու երկրներում հաշվապահական հաշվառման, ֆինանսական հաշվետվողականության և աուդիտի ոլորտների զարգացմանը:

6. **Քննարկված թեմաները.**

Վերը նշված միջոցառումների շրջանակներում քննարկվել են հետևյալ հիմնական թեմաները.

- STAREP (Արևելյան գործընկերության երկրներում աուդիտի և հաշվետվողականության կատարելագործում) ծրագրի շահառու երկրների կողմից հաշվապահական հաշվառման և աուդիտի ոլորտներում բարեփոխումների իրականացման փորձը.
- Ֆինանսական հաշվետվողականությունը և թափանցիկությունը տնտեսական ինտեգրման համատեքստում.
- Արժանահավատ ֆինանսական տեղեկատվության և ֆինանսական գրագիտության դերը.
- Ֆինանսական տեղեկատվությունը՝ որպես Եվրոպայում և Կենտրոնական Ասիայում տնտեսական ինտեգրացման կատալիզատոր.
- Միջազգային ստանդարտների դերը տնտեսական և ֆինանսական ինտեգրացման համատեքստում:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

Համաժողովի շրջանակներում ներկայացվել են ՀՀ-ում իրականացված քայլերը հաշվապահական հաշվառման և աուդիտի ոլորտների արդյունավետ զարգացման ուղղությամբ՝ կարևորելով նման միջոցառումների դերը հատկապես այլ երկրների հաջողված փորձի կիրառման առումով:

Բացի այդ, տեղի են ունեցել հանդիպումներ Ավստրիայի Հանրապետության ֆինանսների նախարարի, STAREP (Արևելյան գործընկերության երկրներում

աուդիտի և հաշվետվողականության կատարելագործում) ծրագրի շահառու երկրների ներակայացուցիչների և Համաշխարհային Բանկի տարածաշրջանային ներկայացուցիչների հետ:

Քննարկվել են շահառու երկրներում հաշվապահական հաշվառման և աուդիտի ոլորտներում իրականացված բարեփոխումների ընթացքը, ինչպես նաև երկրներում ֆինանսական հաշվետվողականության որակի բարձրացման ուղիները:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

STAREP (Արևելյան գործընկերության երկրներում աուդիտի և հաշվետվողականության կատարելագործում) ծրագրի շահառու երկրների ներակայացուցիչների հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել իրականացնելու տեղեկատվության փոխանակում՝ հաշվապահական հաշվառման և աուդիտի ոլորտներում իրականացված բարեփոխումների ընթացքի վերաբերյալ:

Ավստրիայի Հանրապետության ֆինանսների նախարար Հարթվիգ Լոջերի և շահառու երկրների ֆինանսների նախարարությունների բարձրաստիճան պաշտոնատար անձանց հետ կայացած հանդիպման ընթացքում քննարկվել է Ֆինանսական հաշվետվությունների բարեփոխումների կենտրոնի և Ավստրիայի Զարգացման Համագործակցության դերը երկրներում ֆինանսական հաշվետվողականության որակի բարձրացման մեջ:

Հանդիպումներ են տեղի ունեցել նաև Համաշխարհային Բանկի տարածաշրջանային մի շարք ներկայացուցիչների հետ, որոնց ընթացքում քննարկվել են ՀՀ գրանցած հաջողությունները հաշվապահական հաշվառման և աուդիտի ոլորտների բարեփոխումների իրականացման մեջ:

9. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

Առաջարկվել է STAREP (Արևելյան գործընկերության երկրներում աուդիտի և հաշվետվողականության կատարելագործում) ծրագրի շահառու երկրների ֆինանսների նախարարությունների մասնագիտական ստորաբաժանումների միջև իրականացնել համապատասխան տեղեկատվության փոխանակում՝ հաշվապահական հաշվառման և աուդիտի ոլորտներում իրականացված բարեփոխումների ընթացքի վերաբերյալ:

10. **Ստորագրությունը, ամսաթիվ**

Ֆինանսների նախարարի տեղակալ՝ Արման Պողոսյան

30.11.2018թ.